զՍոստանդնուպոլիս. և ապա բաղում նաւ-
օք եկին 'ի վերայ քաղաքին Ստամպօլայ.
և զորութեամբ սուրբ խաչին՝ ամենայն
նաւքն 'ի ծովն ընկղմեցան։ Սա հրամա-
յեաց կոխել և այրել զպատկերսն տերու-
նական՝ և ամենայն սրբոց, որ և պատկերա-
մարտ կոչեցաւ։ Յաւուրս սորա Տաճիկքն
Ակիրիկոյ ընդ ծովն անցին, և զամենայն
Սպանիա առին, զսուրբ Պետրոսի եկեղե-
ցին՝ ձիոյ և ջորոյ ախոռ արարին։

Սոստանդին՝ որդի Լէոնի՝ սկսաւ յամի
Տեառն ՉԼԴ. ինքնակալեալ ամս ԼԵ։
Սա ևս հակառակ պատկերաց սրբոց լինել-
լով զբազում քրիստոնեայսն 'ի սուր սու-
սերի մաշեաց։

Լէոն սկսաւ յամի Տեառն ՉԿԹ. ինք-
նակալեալ ամս Ե։ Սա անմտաբար եկեաց 'ի
կեանս իւր։ Յաւուր միում՝ յեկեղեցւոջն
ետես թագ մի՝ որ ունէր 'ի վերայ իւր ակն
կայծ. և յափշտակեալ զթագն եդ 'ի գը-



Հայ մատենագրութեան թուանշային գրադարան